Հավելված
Հայաստանի Հանրապետության
արտաքին գործերի նախարարի
2025թ. փետրվարի 13-ի
N 409 L հրամանի

ԿԱՐԳ

ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ ԵՎ ՆՐԱՆՑ ՏԵՂԱԿԱԼՆԵՐԻՆ, ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ, ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻՆ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻՆ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ ԵՎ ՆՐԱՆՑ ԳԼԽԱՎՈՐԱԾ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՅՑԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ԴԻՄԱՎՈՐԵԼՈՒ, ՃԱՆԱՊԱՐՀԵԼՈՒ, ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ԿԱՄ ՃԱՇ ԿԱԶՄԱԿԵՐԿՊԵԼՈՒ

1. Սույն կարգով կարգավորվում են օտարերկրյա պետությունում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ծառայության մարմնի (այսուհետ՝ օտարերկրյա պետությունում դիվանագիտական ծառայության մարմին) կողմից Հայաստանի Հանրապետության կառավարության անդամներին և նրանց տեղակալներին, Անվտանգության խորհրդի անդամներին, Ազգային ժողովի խորհրդի անդամներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահին, Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանին, Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատական խորհրդի նախագահին և նրանց գլխավորած պատվիրակություններին օտարերկրյա պետություններ այցերի ժամանակ դիմավորելու, ճանապարհելու, աշխատանքային հանդիպումներին մասնակցելու, ինչպես նաև ընդունելություն կամ ճաշ կազմակերպելու հետ կապված հարաբերությունները:

2. Կառավարության անդամներին, Անվտանգության խորհրդի անդամներին, Ազգային ժողովի նախագահի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահին, Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանին, Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատական խորհրդի նախագահին և նրանց գլխավորած պատվիրակություններին օտարերկրյա պետություն այցի ժամանակ դիմավորում և ճանապարհում է օտարերկրյա պետությունում դիվանագիտական ծառայության մարմնի ղեկավարը, եթե վերջինիս նստավայրը գտնվում է տվյալ օտարերկրյա պետությունում: Օտարերկրյա պետությունում դիվանագիտական ծառայության մարմնի ղեկավարի կողմից պաշտոնատար անձանց և պատվիրակություններին դիմավորելու և ճանապարհելու անհնարինության դեպքում՝ սույն կետում նշված պաշտոնատար անձանց և նրանց գլխավորած պատվիրակություններին դիմավորում և ճանապարհում է տվյալ օտարերկրյա պետությունում դիվանագիտական ծառայության մարմնի անձնակազմի անդամներից մեկը:

3. Կառավարության անդամների տեղակալներին, Ազգային ժողովի խորհրդի անդամներին, բացառությամբ՝ Ազգային ժողովի նախագահի տեղակալներին, նրանց գլխավորած պատվիրակություններին օտարերկրյա պետությունում դիվանագիտական ծառայության մարմնի ղեկավարի հանձնարարությամբ դիմավորում և ճանապարհում է օտարերկրյա պետությունում դիվանագիտական ծառայության մարմնի անձնակազմի անդամներից մեկը՝ արարողակարգային ընթացակարգերին համապատասխան:

4. Օտարերկրյա պետությունում դիվանագիտական ծառայության մարմինն, անհրաժեշտության դեպքում, համաձայն նախապես հաստատված օրակարգի՝ սույն կարգի 1-ին կետում նշված անձանց և նրանց գլխավորած պատվիրակություններին հանդիպումների վայր ուղեկցելու նպատակով ապահովում է փոխադրամիջոցներով:

5. Օտարերկրյա պետությունում դիվանագիտական ծառայության մարմնի ղեկավարը կամ դիվանագետը, որպես կանոն, մասնակցում է սույն կարգի 1-ին կետում նշված անձանց և նրանց գլխավորած պատվիրակությունների հանդիպումներին, միջազգային համաժողովներին և նիստերին, որոնք նախատեսում են Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականությանն առնչվող հարցերի քննարկում, կամ որոնց արդյունքում կարող են ընդունվել Հայաստանի Հանրապետության համար պարտադիր կատարման ենթակա բանաձևեր կամ որոշումներ, ձեռք բերվել արտաքին քաղաքականությանն առնչվող

պայմանավորվածություններ, արվել արտաքին քաղաքականության հարցերի հետ կապված հայտարարություններ:

6. Անհրաժեշտության դեպքում, այցի ընթացքում մեկ անգամ օտարերկրյա պետությունում դիվանագիտական ծառայության մարմնի անունից կարող է կազմակերպվել ընդունելություն կամ ճաշ՝ նախապես համաձայնեցնելով Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության հետ:

7. Տարանցիկ թռիչքների, ինչպես նաև անձնական նպատակով օտարերկրյա պետություններ այցելությունների դեպքում օտարերկրյա պետությունում դիվանագիտական ծառայության մարմնի ղեկավարի կամ դիվանագետի կողմից դիմավորում կամ ճանապարհում չի կազմակերպվում:

8. Օտարերկրյա պետությունում դիվանագիտական ծառայության մարմնի կողմից սույն կարգի 1-ին կետում նշված անձանց և նրանց գլխավորած պատվիրակություններին օտարերկրյա պետություններ այցերի ժամանակ դիմավորելու և ճանապարհելու գործընթացի կազմակերպումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության միջոցով:

9. Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարի հանձնարարականի հիման վրա՝ սույն կարգի դրույթները կարող են տարածվել այլ պաշտոնատար անձանց վրա: